ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՍԻԼՎԻ ՎԱՀԵԻ

ԻՆՔՆԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԾՆՈՂԱԿԱՆ ԴԵՊՐԻՎԱՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԺԹ.00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝ **Վարդուհի Ռոբերտի Պապոյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Ասյա Սուրենի Բերբերյան**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Լիլիթ Վարազդատի Բաղդասարյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ.-ի մայիսի 23-ին՝ ժամը 15^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52 ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2023թ. ապրիլի 9-ին:

Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Դ. Ռ. Հայրապետյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հիմնախնդրի արդիականությունը: Հոգեբանական տեսություններում և հետազոտություններում սակավաթիվ են հասուն անձին վերաբերող ծնողական դեպրիվացիայի հետևանքների մասին դիտարկումները: Դա ամենևին չի նշանակում, որ դրա ուսումնասիրությունների անհրաժեշտությունը թերագնահատվել է. պարզապես հասուն տարիքում ծնողական դեպրիվացվածությունը ստուգելիության առումով դժվարություններ է առաջացրել՝ կապված այն հանգամանքների հետ, թե հետազոտվող անձը մանուկ հասակում արդյոք ունեցե՞լ է դեպրիվացիա, ի՞նչ խորությամբ և ինչպիսի՞ պայմաններում: Այս խնդիրը մնացել է առկախ: Ուսումնասիրությունների կիզակետում եղել են միայն երեխաները, որոնց հետագա զարգացումները դեռահասությունից հետո մնացել են անտեսված: Մինչդեռ պակաս կարևոր չէ նաև ծնողական դեպրիվացիա ունեցող անձի ուսումնասիրությունները հասուն տարիքում:

Ժամանակակից աշխարհում մարդկային ներուժի զարգացման և կիրառման հարցերը նորովի են իմաստավորվում: Փոփոխվող հասարակությունն էլ ավելի բարձրացված պահանջներ է առաջադրում մարդու ինքնուրույնության, շփվողականության, ինքնարտահայտման և համատեղ գործունեության անձնային որակներին: Այս հանգամանքն ինքնիրացման վերաբերյալ հետազոտությունները դարձնում է պահանջված և արդիական: Ուստի անհրաժեշտություն է ծագում փոքր-ինչ այլ կերպ դիտարկել անձի ինքնիրացման հիմնախնդիրը, քան պարզապես դասականորեն ընդունված ձևերն են:

Տեսական գրականության մեջ ընդունված է, որ մանկական տարիքում ապրած ծնողական դեպրիվացիան երեխայի անձի կառուցվածքում խորը հետքեր է թողնում, որոնք կարող են մշտական լինել ողջ կյանքի ընթացքում:

Լայնորեն ընդունված գիտական մոտեցումները թարմացման կարիք ունեն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ամեն դեպքում արդի իրականությունը հնարավորություն ընձեռում է անձին հաղթահարել ծնողական դեպրիվացիայի բացասական հետևանքները՝ շնորհիվ փոփոխվող հասարակության և հասարակական ինստիտուտների զարգացման, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաների առաջխաղացման:

Ուստի, անհրաժեշտություն է առաջանում հետազոտել հասուն տարիքում արտահայտված ծնողական դեպրիվացիայի բացասական ազդեցությունները՝ դրանք կապելով ինքնիրացման գործընթացի հոգեբանական նախադրյալների հետ: Վերջիններս կնպաստեն հասուն տարիքում անձի ծնողական դեպրիվացիայի հոգեբանական հետևանքների ստուգելիության բարձրացման, ինչպես նաև կանխարգելող և հաղթահարող վարքի ձևավորման գործին:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել արձի ինքնիրացման գործընթացի և ծնողական դեպրիվացիայի միջև կապերի օրինաչափությունները երիտասարդների օրինակով:

Հետազոտության խնդիրները:

1. Կատարել ծնողական դեպրիվացիայի դրսևորման և ինքնիրացման գործընթացի հատկանիշների հոգեբանական տեսամեթոդական վերլուծություն:
2. Բացահայտել ինքնիրացման գործընթացի և ծնողական դեպրիվացիայի միջև փոխադարձ կապերը:
3. Բացահայտել ծնողական դեպրիվացիա ունեցող և ծնողական դեպրիվացիա չունեցող անձանց (երիտասարդների) ինքնիրացման հոգեբանական բաղադրիչների դրսևորման տարբերությունները:

4. Պարզել դեպրիվացված անձանց (երիտասարդների) ինքնիրացման հոգեբանական նախադրյալները՝ սեփական կյանքի իմաստավորման, նպատակադրման (կենսաիմաստային կողմնորոշումների) և ինքնավերաբերմունքի փոխկապակցվածության համատեքստում:
5. Բացահայտել ինքնիրացման գործընթացը ապահովող հոգեբանական բաղադրիչները:

Հետազոտության օբյեկտն է՝ ծնողական դեպրիվացիա ունեցող անձանց ինքնիրացման հոգեբանական նախադրյալները:

Հետազոտության առարկան է՝ ծնողական դեպրիվացիա ունեցող անձանց ինքնիրացման գործընթացի և հոգեբանական նախադրյալների փոխպայմանավորվածությունը:

Հետազոտության վարկած: Ենթադրվում է, որ անձի ինքնիրացման գործընթացը պայմանավորող կյանքի նպատակները, կյանքի իմաստը և ինքնավերաբերմունքը նպաստում են ծնողական դեպրիվացիա ունեցող և առանց ծնողական դեպրիվացիայի անձանց ինքնիրացման հնարավորությունների հավասարեցմանը:

Հետազոտության ընտրանքը: Իրականացվել է էմպիրիկ հետազոտություն, որին մասնակցել են 156 երիտասարդներ՝ 21-35 տարեկան տարիքային միջակայքում, որոնցից 24 հետազոտվողների տվյալները չեն ներառվել արդյունքների վերլուծության մեջ անլիարժեքության կամ անհամապատասխանության պատճառով: Հետազոտվողների խումբը բաժանվել է 2 մասերի՝ հետազոտական առաջին (60 հետազոտվող) և երկրորդ (72 հետազոտվող) խմբեր: Հետազոտական առաջին խմբում ընդգրկվել են անձինք, ովքեր համապատասխան հարցարանի տվյալներով մանկական տարիքում (մինչև 10 տարեկան հասակը) ծնողական դեպրիվացիա են ունեցել: Ծնողական դեպրիվացիա ասելով՝ մենք նկատի

ունենք թե՛ ծնողի բացակայությամբ, թե՛ ծնողի դերի թերացման հետևանքով առաջացած դեպրիվացիան: Երկրորդ խմբում ընդգրկվել են ըստ համապատասխան հարցարանի տվյալների դեպրիվացիա չունեցող անձինք:

Հետազոտության տեսամեթոդական հիմքերն են.

- Ջ. Բոուլբիի տեսությունը մայրական դեպրիվացիայի վերաբերյալ՝ կապված երեխայի հոգեկան զարգացման գործընթացի հետ:
- Յ. Լանգմեյերի և Զ. Մատեյչեկի մոտեցումները երեխայի հոգեկան զարգացման վրա ծնողական դեպրիվացիայի ազդեցության երկարաժամկետ հետևանքների մասին:
- Ա. Մասլոուի կողմից առաջադրված անձի ինքնիրացման տեսության առանցքային գաղափարը՝ անձի ողջ ներուժի իրացման մասին:
- Դ. Լեոնտևի տեսամեթոդական մոտեցումները կենսաիմաստային կողմնորոշումների վերաբերյալ՝ որպես անձի կողմնորոշման վիճակ դեպի կյանքի իմաստային արժեքները և կյանքի իմաստի ձեռքբերումը:

Հետազոտության մեթոդներն են՝ թեստավորումը, հարցազրույցը և գրավոր տարբերակով հարցումը:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդիկաները.

- Ն. Կալինայի և Ա. Լազուկինայի «Անձի ինքնիրացման ախտորոշում» թեստը,
- Դ. Լեոնտևի «Կենսաիմաստային կողմնորոշումներ» թեստը,
- Տ. Դեմբոյի և Ս. Ռուբինշտեյնի «Ինքնագնահատման սանդղակ» թեստի հայերեն ադապտացված տարբերակը,
- «Դեյթոյի սթրեսի թեստ»-ի հայալեզու հարմարեցված տարբերակը,

- Հետազոտության ընթացքում օգտագործվել են նաև հարցազրույցի և մեր կողմից մշակված գրավոր հարցման մեթոդները՝ ուղղված անձի ծնողական դեպրիվացիայի առկայության պարզաբանմանը:

Հետազոտության գիտական նորույթը: Մինչ օրս հոգեբանության մեթոդաբանությամբ ընդունված տեսական դրույթների համաձայն՝ ծնողական դեպրիվացիան իր ազդեցությունը շարունակում է անձի ողջ կյանքի ընթացքում, և երեխայի հոգեկան կառուցվածքում թողնելով խորը փոփոխություններ, անշրջելի է դառնում նրա հետագա կյանքի համար: Սակայն գրեթե բացակայում են գիտական հետազոտական տվյալներն այն մասին, թե ինքնիրացման գործընթացը որքանով է բարեհաջող կամ անբարեհաջող ընթացք ստացել հենց ծնողական դեպրիվացիա ունեցած անձանց շրջանում:

- Այս հետազոտությամբ բացահայտված է այն օրինաչափությունը, ըստ որի ինքնիրացման գործընթացը հասուն տարիքում խիստ կերպով չէ, որ կապված է վաղ շրջանի ծնողական դեպրիվացիայի հետ: Սույն հետազոտության արդյունքները հաստատում են, որ կարո՛ղ է ինքնիրացման բարեհաջող ընթացք լինել նաև ծնողական դեպրիվացիա ունեցողների շրջանում՝ հաճախ չզիջելով դեպրիվացիա չունեցող անձանց: Ծնողական դեպրիվացիան թեև պարունակում է բարեհաջող ինքնիրացմանը սպառնացող ռիսկեր, սակայն ինքնիրացման գործընթացում դրա հետևանքները կանխատեսելի են և վերահսկելի:
- Ռետրոսպեկտիվ (հետահայաց) վերլուծության ճանապարհով անդրադարձ է կատարվել «ծնողական դեպրիվացիա» երևույթին՝ որպես ինքնիրացման գործընթացի վրա ազդող գործոնի, և բացահայտվել են ինքնիրացման գործընթացի այն նախադրյալները,

որոնք ապահովում են ինքնիրացման հավասար հնարավորություններ ինչպես ծնողական դեպրիվացիա չունեցողների, այնպես էլ ծնողական դեպրիվացիայով անձանց համար: Այդ նախադրյալներն են կյանքի նպատակները, կյանքի իմաստը և ինքնավերաբերմունքը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ստացված արդյունքները կարող են համալրել ծնողական դեպրիվացիայի և անձի ինքնիրացման վերաբերյալ արժանահավատ հետազոտական տվյալները, նպաստել դրանց շուրջ հաճախակի ծագող երկակի և վիճահարույց տեսամեթոդական խնդիրների լուծմանը, նոր հեռանկարներ բացել հասուն տարիքի մարդկանց շրջանում անձի ծնողական դեպրիվացիայի հոգեբանական հետևանքների հետազոտելիության և ստուգելիության արդյունավետությունը բարձրացնելու:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Սույն հետազոտությամբ ստացված արդյունքները կարող են նպաստել ծնողական դեպրիվացիայի և ինքնիրացման երևույթներով պայմանավորված խնդիրների առավել արագ և հստակ ճանաչմանը՝ թե՛ հոգեդիագնոստիկ, թե՛ հոգեբանական խորհրդատվական ու հոգեթերապևտիկ աշխատանքներում, ինչպես նաև դյուրին կդարձնի նշյալ խնդիրների լուծման ճանապարհին անցանկալի զարգացումները կանխատեսելու և վերահսկելու գործընթացը: Հետազոտական տվյալները կարող են ներդրվել նաև անձնային աճի ապահովման հոգեբանական տեխնոլոգիայում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

1. Ծնողական դեպրիվացիայի առկայության հանգամանքը չի պարտադրում անձի ինքիրացման ձախողում: Ծնողական դեպրիվացիան թեև բացասական ազդեցություն է ունենում

ինքնիրացման գործընթացի վրա, սակայն հիմնական գործոն չի հանդիսանում դրանում: Անձի ինքնիրացումը կարելի է դիտարկել որպես ծնողական դեպրիվացիայից հարաբերականորեն անկախ գործընթաց:

2. Գոյություն ունեն հոգեբանական նախադրյալներ, որոնք ինքնիրացվելու հավասար հնարավորություններ են ընձեռում ծնողական դեպրիվացիայով և առանց ծնողական դեպրիվացիայի անձանց համար: Հոգեբանական այդ նախադրյալներն են՝ կյանքի նպատակները, կյանքի իմաստը և ինքնավերաբերմունքը:
3. Ծնողական դեպրիվացիայի առկայության կամ բացակայության պայմաններում վերը նշված նախադրյալների արտահայտվածության տարբերությունները դրսևորվում են հիմնականում կենսաժամանակային ուղղվածության, արժեքային կողմնորոշումների և ինքնահամակրանքի հատկանիշներով:
4. Անձի ինքնիրացման գործընթացի հատկանիշները հնարավորություն են տալիս անձանց բարելավելու ինքնիրացման ցուցանիշները՝ անկախ նրանից, թե նրանք ունեցել են արդյոք ծնողական դեպրիվացիա, թե ոչ:

Հետազոտության փուլերը: Հետազոտությունը իրականացվել է 4 փուլերով:

1-ին փուլում որոշվել է էմպիրիկ հետազոտության ռազմավարությունը:

2-րդ փուլում մշակվել է հարցվողների շրջանում դեպրիվացիայի առկայությունը բացահայտող հարցաթերթիկ:

3-րդ փուլում իրականացվել է գրավոր տարբերակով հարցում և հարցազրույց: Վերջինս ներառել է, գրավոր տարբերակով հարցման պատասխանների մանրամասների պարզաբանում:

4-րդ փուլում կազմվել են առաջին և երկրորդ հետազոտական խմբերը ըստ ծնողական դեպրիվացիայի առկայության, որոնց հետ անցկացվել է թեստավորում:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունը ապահովված են հետազոտության մեթոդոլոգիական հիմքերով, հուսալիության և վալիդության բարձր աստիճան ունեցող մեթոդիկաների համակարգված կիրառմամբ, տվյալների մշակման մաթեմատիկական վիճակագրական համարժեք մեթոդների ընդգրկմամբ: Հետազոտության արդյունքները պարբերաբար զեկուցվել են ԵՊՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ընդհանուր հոգեբանության և ՀՀ տարբեր բուհերի մասնագիտական ամբիոնների համատեղ նիստերի աշխատանքներում, հանրապետական գիտաժողովներում: Աշխատանքի հիմնական արդյունքները ներկայացված են յոթ հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գործնական առաջարկություններից, 112 աղբյուր գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության մեջ օգտագործված են 10 աղյուսակ, 11 նկար: Ատենախոսության ծավալը համակարգչային շարվածքով 120 տպագիր էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հիմնախնդրի արդիականությունը, ներկայացված են հետազոտության հիմնական վարկածը, օբյեկտը,

առարկան, նպատակը, խնդիրները, հետազոտության ընտրակազմը, ընտրված մեթոդիկաները, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունը, ինչպես նաև ատենախոսական աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին «**Ծնողական դեպրիվացիայի երևույթը և դրա բացասական հետևանքների հոգեբանական վերլուծությունը**» գլխի 1.1՝ «**Ծնողական դեպրիվացիայի վերաբերյալ հիմնական տեսությունները և մոտեցումները**» ենթագլխում ներկայացվում են ծնողական դեպրիվացիայի սահմանումները, եզրույթի իմաստային բազմազանությունը, հիմնական տեսությունները և մոտեցումները, ծնողական դեպրիվացիա ապրելու տարիքային սահմանումները, տարբերակումը մեկուսացումից և սեպարացիայից:

Ատենախոսության 1.2՝ «**Ծնողական դեպրիվացիայի առաջացման պայմանները մանկական հաստատություններում և ընտանիքներում**» ենթագլխում մանրամասն քննարկվում են ծնողական դեպրիվացիայի առաջացման պայմանները մանկական հաստատություններում և ընտանիքներում: Տարանջատվում են ծնողական դեպրիվացիայի տիպերը (ընտանիքում ծնողների բացակայությունը, ծնողի առկայության դեպքում ծնողական դեպրիվացիայի պատճառները և այլն):

Ատենախոսության 1.3՝ **«Ծնողական դեպրիվացիայի հետևանքները»** ենթագլխում քննարկվում են երեխայի հոգեկան զարգացման հնարավորությունները և ուղիները ծնողական դեպրիվացիայի դեպքերում, բացասական հետևանքների անշրջելիության հիմնահարցը, ինչպես նաև դեպրիվացիայի հանդեպ խոցելիության աստիճանով պայմանավորված սեռային տարբերությունները:

Ատենախոսության երկրորդ **«Ինքնիրացման գործընթացի յուրահատկությունները և ինքնիրացվածության շուրջ տեսական դրույթները»** գլխի 2.1՝ **«Ինքնիրացման սահմանումները և հիմնական տեսական մոտեցումները»** ենթագլխում ներկայացված են տարբեր հեղինակների տեսություններն ու մոտեցումները «ինքնիրացում» երևույթի վերաբերյալ: Քննարկվում են ինքնիրացման շուրջ գիտական տարակարծությունները՝ կապված հասկացության բովանդակության, իմաստային ծանրաբեռնվածության, ինքնիրացման արդյունքի հասանելիության և ուղիների հետ:

Ատենախոսության 2.2՝ **«Անձի ինքնիրացման գործընթացի սխեման»** ենթագլխում դիտարկվում է ծնողական դեպրիվացիա ունեցող անձանց շրջանում ինքնիրացման բացահայտումը՝ ներառելով կյանքի իմաստը, կյանքի նպատակները և ինքնավերաբերմունքը՝ փոխադարձ կապերով: Ներկայացվում է անձի ինքնիրացումը որպես կյանքի իմաստի որոնման մղող աղբյուր և որպես ոգեղեն աճի գործոն, մարդու սեփական կյանքի իմաստի որոնման ու իրացման ձգտում, բնածին խթան:

Քննարկվում է ինքնիրացման և կենսաիմաստային կողնորոշումների կապը, մասնավորապես կյանքի նպատակների ազդեցությունը ինքնիրացման գործընթացի վրա, ինչպես նաև ինքնավերաբերմունքի և ինքնիրացման փոխկապակցվածության փաստը սեփական Ես-ի մասին պատկերացումների, ինքնագնահատականի, ինքնահամակրանքի, սեփական ուժերի նկատմամբ վստահության, սեփական դրդապատճառների ճանաչելիության տեսանկյունից:

Ատենախոսական աշխատանքի երրորդ **«Անձի ինքնիրացման և ծնողական դեպրիվացիայի միջև կապերի բացահայտման փորձարարական հետազոտություն»** գլխի 3.1՝ **«Հետազոտության**

պայմանները, համակազմի բնութագիրը և հետազոտական մեթոդների հիմնավորումը» ենթագլխում ներկայացված են հետազոտության իրականացման տրամաբանությունը, ռազմավարությունը, մեթոդները ու ներգրավված ընտրակազմի հիմնավորումը: Մանրամասն ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված թեստավորման շրջանակում օգտագործված գրավոր տարբերակով հարցման, հարցազրույցի և մեթոդիկաների էությունը, նպատակահարմարությունը և բնութագրերը:

Ատենախոսական աշխատանքի 3.2՝ **«Հետազոտության արդյունքների վերլուծություն»** ենթագլխում ներկայացված են մանկական տարիքում ծնողական դեպրիվացիայի առկայության բացահայտմանն ուղղված գրավոր տարբերակով հարցման և հարցազրույցի արդյունքները, որի օգնությամբ ձևավորվել են հետազոտական առաջին և երկրորդ խմբերը:

Ներկայացված են նաև իրականացված հետազոտության արդյունքում ստացված թեստավորման արդյունքները: Վերլուծվել են փորձարարական խմբում հոգեբանական գործոնների միջև համահարաբերակցային կապերը: Դիտարկելով հետազոտական առաջին խմբում ինքնիրացման և կենսահիմաստային կողմնորոշումների փոխկապակցվածության ցուցանիշները, պարզվել է, որ ժամանակային կողմնորոշման սանդղակը ուղիղ համեմատական կապի մեջ է կենսահիմաստային կողմորոշումների թեստի միաժամանակ մի քանի սանդղակների հետ՝ կյանքի վերահսկման լոկուսի (0.389**, $p<0.001$**), ես-ի վերահսկման լոկուսի (0.257*, $p< 0.05$*) և կյանքի նպատակների (0.255*, $p< 0.05$*) հետ: Իրենց հերթին այս սանդղակները կապված են ինքնահամակրանքի հետ (0.404**, $p<0.001$**): Սակայն դա դրսևորվում է ոչ թե ուղղակիորեն, այլ միջնորդավորված կերպով՝ պայմանավորված ժամանակի բաղադրիչի միջոցով: Ժամանակի

մեջ կողմորոշումը առաջնահերթ է ոչ միայն որպես առանձին բաղադրիչ, այլև որպես կապող օղակ ինքնիրացման և կենսաիմաստային կողմնորոշումների դրսևորման համար:

Աղյուսակ 1. *Ծնողական դեպրիվացիա ունեցող անձանց ինտերկոռելյացիոն արդյունքներ*

	Աջեթներ	Հայացք մարդու	Հանդուրժողականություն	Ստեղծարարություն	Ինքնասիրություն	Սպոնտանություն	Ինքնաիրականացում	Ինքնասիրություն	Շփոփրանալու ունակություն	Հարգանքի զգացում	Կյանքի նպատակներ	Կյանքի ընթացք	Կյանքի արդյունք	Ես-ի վերահսկման	Կյանքի վերահսկման լոկուս
Ժամանակի կողմնորոշում	.045	-0.74	**.359****	.051	.316*	**.334****	.102	**.404****	.049	-.036	**.255***	.153	.243	**.257***	**.389****
Աջեթներ		.018	.081	**.403****	.256*	-.007	.097	.119	.171	.249	.183	.094	.094	.121	.104
Հայացք մարդու բնույթին			.152	.225	.056	.096	-.055	.171	-.054	.091	-.030	.133	.068	.194	.029
Ճանաչողության պահանջմունք				.232	**.446****	**332****	.055	.251*	**.356****	.069	.224	.040	.132	.049	-.042
Ստեղծարարություն					.288*	.313*	.153	.232	**.390****	.244	.081	.008	.114	-.032	.085
Ինքնավարություն						**.615****	.200	.176*	**.394****	**.419****	.083	.016	-.045	.087	.186
Սպոնտանություն							**.365****	.265*	.255*	.274*	.156	.172	.101	**.261***	**.290***
Ինքնահասկացում								.227	.049	.163	-.121	.055	.012	.132	.005
Ինքնահամակրանք									.158	.208	.138	.023	-.026	.126	.205
Շփվողականություն										**.629****	.061	.045	-.031	-.056	-.040
Հաղորդակցման ճկունություն											.058	.043	.002	-.041	-.001
Կյանքի նպատակներ												**.531****	**.581****	**.642****	**.410****
Կյանքի ընթացք													**.507****	**.656****	**.381****
Կյանքի արդյունք														**.566****	**.495****
Ես-ի վերահսկման լոկուս															**.518**.**
Կյանքի վերահսկման լոկուս															

n= 60, p<0.05*, p< 0.001**

Ինքնիրացումը կյանքի իմաստի հետ փոխկապակցված է նաև սպոնտանության միջոցով: Այն կոռելյացիոն կապի մեջ է գտնվում կյանքի վերահսկման լոկուսի (0.290*, p< 0.05*) և ես-ի վերահսկման լոկուսի (0.261*, p< 0.05*) հետ: Դա նշանակում է, որ ինչքան վստահ է անձը ինքն իր ուժերի և շրջապատող աշխարհի վրա, ինչքան ունակ է սպոնտան վարքի, այդքան ավելի շատ է վերահսկում իր կյանքը, ազատորեն որոշումներ կայացնում, ինքն իրեն դիտարկում է որպես ուժեղ անհատականություն, ով ունի ընտրության բավարար ազատություն:

Ընդ որում նշենք, որ վիճակագրական վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ տարբերություններ չկան դեպրիվացված և դեպրիվացիա չունեցող հետազոտվողների կյանքի իմաստի միջև: Դեպրիվացվածների համար իրենց կյանքը նշանակալի է, նպատակներով լի և համահունչ. այլ կերպ ասած՝ նրանք կյանքում ունեն իմաստալից կողմնորոշումներ: Թեև ծնողական դեպրիվացիան դժվարությունների, զրկանքների, դժգոհությունների աղբյուր է եղել, սակայն կյանքի իմաստի ձևավորման առումով պատկերը գրեթե նույնն է դեպրիվացիա չունեցողների հետ համեմատության մեջ:

Ինչպես նաև հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հետազոտվողները անկախ ծնողական դեպրիվացիայի առկայությունից, ունեն ինքնագնահատականի ադեկվատ մակարդակ:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ աղջիկների և տղաների վրա մանկական և դեռահասության տարիքում ծնողական դեպրիվացիայի ազդեցությունը տարբեր կերպ է անդրադառնում, սակայն մեր հետազոտության շրջանակներում սեռային չափանիշով տարբերություն չի արձանագրվել: Այսինքն կարելի է պնդել, որ արդեն իսկ երիտասարդ տարիքում գենդերային գործոնը էական որևէ ազդեցություն չունի:

Սույն ենթագլխում դուրս են բերվել ծնողական դեպրիվացիայի առանձին հատկանիշները, կիզակետված ուսումնասիրության շնորհիվ տարբերակվել է դեպրիվացիա ունեցող անձանց խումբը, բացահայտվել է դեպրիվացիա ունեցող և չունեցող անձանց շրջանում ինքնիրացման գործընթացին նպաստող հատկությունները. դուրս բերվել այն բաղադրիչները, որոնք գործոն են հանդիսանում ինքնիրացման գործընթացի արդյունավետության համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծնողական դեպրիվացիայի՝ ինքնիրացման վրա ունեցած ազդեցության ուսումնասիրությունները թե՛ տեսամեթոդական, թե՛ հետազոտական վերլուծություններով, հանգեցրեցին հետևյալ եզրակացություններին:

1. Գրեթե բոլոր տեսամեթոդական վերլուծություններում, ընդունված հայեցակարգի համաձայն, ծնողական դեպրիվացիան և ինքնիրացման խափանումը ներկայացված են լոկ պատճառահետևանքային կապերի տրամաբանությունով՝ առ այն, որ ծնողական դեպրիվացիայի դեպքում միանշանակ խափանվում է անձի ինքնիրացումը: Մեր վերլուծությունները ցույց տվեցին, որ այս երկու երևույթները կարող են ունենալ նաև վիճակագրական կապեր, որն արտահայտված է անձի ինքնավերաբերմունքով ու կենսափորձով, ինչը բարենպաստ հող է դառնում ինքնիրացվելու համար:
2. Դեպրիվացված անձանց (երիտասարդների) ինքնիրացման հոգեբանական նախադրյալներն են կյանքի իմաստը, կյանքի նպատակները (կենսաիմաստային կողմնորոշումները) և ինքնավերաբերմունքը:
3. Դեպրիվացված անձանց շրջանում արժեքային կողմնորոշումների խափանումը ցույց է տալիս նրանց սոցիալ-հոգեբանական ապահարմարվածությունը:
4. Թեև ինքնահամակրանքը ինքնագնահատականի բաղադրիչ մասն է կազմում, այնուհանդերձ դեպրիվացված անձանց դեպքում այն կարող է հարաբերականորեն անկախ դրսևորվել ինքնագնահատականի մակարդակից:

5. Ծնողական դեպրիվացիան գործոն չի հանդիսանում կյանքի իմաստի նկատմամբ վերաբերմունքի հարցում: Այսինքն՝ մանկական տարիքում ապրած ծնողական դեպրիվացիան անշրջելի հետևանքներ չի թողնում անձի կյանքի իմաստավորման գործընթացի վրա:
6. Կենսաիմաստային կողմնորոշումների և ինքնիրացման փոխկապակցվածությունը արտահայտվում է ժամանակի մեջ կողմնորոշման և ինքնաբուխ կենսառճի միջոցով: Ի տարբերություն ծնողական դեպրիվացիա չունեցող անձանց, դեպրիվացված անձանց ժամանակի մեջ կողմնորոշումը ուղղված չէ դեպի ներկան, ինչը նշանակում է, որ նրանք ընկղմված են անցյալի ապրումների մեջ՝ նվաճումների գերագնահատված ցանկությամբ:
7. Ծնողական դեպրիվացիա չունեցող անձանց դեպքում ճանաչողության պահանջմունքը ներառում է ինքնիրացման և կենսաիմաստային կողմնորոշումների կապերը:

Այսպիսով, մեր կողմից առաջադրված վարկածը հիմնականում հաստատվում է: Ենթադրվում էր, որ անձի ինքնիրացման գործընթացը պայմանավորող կյանքի նպատակները, կյանքի իմաստը և ինքնավերաբերմունքը նպաստում են ծնողական դեպրիվացիա ունեցող և առանց ծնողական դեպրիվացիայի անձանց ինքնիրացման հնարավորությունների հավասարեցմանը:

Վարկածը հաստատվում է հետևյալ մասերով.

- Անձի ինքնիրացման գործընթացը պայմանավորված է կյանքի նպատակներով, կյանքի իմաստով և ինքնավերաբերմունքով:
- Մանկական տարիքում ծնողական դեպրիվացիայի առկայությունը միշտ չէ, որ խափանում է անձի հետագա ինքնիրացման գործընթացը՝ շնորհիվ այդ նախադրյալների արդյունավետ իրացման:

Սակայն ինքնիրացման բաղադրիչներից ոչ բոլորն են, որ ծնողական դեպրիվացիայի առկայության դեպքում ցույց են տալիս անձանց ինքնիրացվացությունը: Կենսաժամանակային ուղղվածությունը, արժեքային կողմնորոշումները և ինքնահամակրանքը առավել կախված են ծնողական դեպրիվացիայից, և մյուս բաղադրիչների հետ միասին կարող են ինքնիրացման ցուցիչներ լինել միայն ծնողական դեպրիվացիայի չենթարկված անձանց համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Թարջումանյան Ս. Վ., Հոգեբանական դեպրիվացիայի հետևանքները և դրանց դրսևորումները անձի հոգեկան զարգացման գործընթացում: Եվրոպական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու 10(01)- Եր.: 2019, 266-273:
2. Թարջումանյան Ս. Վ., Դեպրիվացված անձանց ինքնիրացման հոգեբանական նկարագիրը: «Արդի հոգեբանություն» գիտական հանդես 2(4)- Եր.: 2019, 343-349:
3. Tarjumanyan S. V., A theoretical review on socio-psychological problems among deprived people. Եվրոպական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու 10(02)- Եր.: 2019, 274-282:
4. Թարջումանյան Ս. Վ., Դեպրիվացված անձանց հետազոտության մեթոդների ընտրությունն ու հիմնավորումը: Եվրոպական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու 11(01)- Եր.: 2020, 447-454:
5. Tarjumanyan S. V., Peculiarities of self-actualization among people with parental deprivation in childhood. «Կաճառ» գիտական պարբերական 2-Եր.:2022, 102-116:
6. Tarjumanyan S. V., Meaning-life orientations among people with parental deprivation in childhood. «Արդի հոգեբանություն» գիտական հանդես 2(11)- Եր.: 2022, 41-48:
7. Tarjumanyan S. V., The interrelationship of meaning-life orientations and self-esteem among people with parental deprivation. «Գիտական Արցախ» պարբերական 3(14)- Եր.: 2022, 184-190:

ТАРДЖУМАНЯН СИЛЬВИ ВАГЕЕВНА

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ПРОЦЕССА САМОАКТУАЛИЗАЦИИ В УСЛОВИЯХ РОДИТЕЛЬСКОЙ ДЕПРИВАЦИИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01- «Общая психология. Теория и история психологии. Психология личности».

Защита диссертации состоится 23 мая 2024 г., в 15:00 на заседании специализированного совета по психологии 067 ВАК по присуждению ученых степеней при Ереванском государственном университете, по адресу: 0025, ул. Абовяна 52 а, Ереван, Армения.

РЕЗЮМЕ

Актуальность темы: В современном мире вопросы развития и применения человеческого потенциала обретают новое значение. Проблема самоактуализации личности приобретает особое значение в сфере современных социально-психологических исследований. В современных подходах основной упор делается на личностный рост и эффективное поведение. Этот факт делает исследования по самоактуализации востребованными и актуальными. В психологической теории и исследованиях мало наблюдений за влиянием родительской депривации на взрослую жизнь. Это вовсе не означает, что необходимость его изучения недооценивалась. Дело в том, что родительская депривация во взрослом возрасте создала трудности в плане проверяемости.

На проблему самоактуализации личности необходимо смотреть несколько иначе, чем это принято классически, в том числе и в контексте родительской депривации.

Объектом исследования является психологические предпосылки самоактуализации у лиц с родительской депривацией.

Предметом исследования является взаимозависимость процесса самоактуализации и психологических предпосылок у лиц с родительской депривацией.

Цель исследования выявить закономерности взаимосвязи процесса самоактуализации и родительской депривации.

Гипотеза исследования. Предполагается, что жизненные цели, смысл жизни и самоотношение, определяющие процесс самоактуализации личности, способствуют уравниванию возможностей самоактуализации у лиц с родительской депривацией и без родительской депривации.

Задачи исследования

1. Провести теоретический анализ проявления родительской депривации и особенностей процесса самоактуализации.

2. Выявить взаимные связи между процессом самоактуализации и родительской депривацией.
3. Выявить различия в проявлении психологических компонентов самоактуализации у лиц (молодёжи) с родительской депривацией и без родительской депривации.
4. Выяснить психологические предпосылки самоактуализации депривированных лиц (молодёжи) в контексте смысла своей жизни, целеустремленности (смысло-жизненных ориентаций) и самоотношения.
5. Выявить психологические компоненты, поддерживающие процесс самоактуализации.

Научная новизна исследования.

- Это исследование выявило закономерность, при которой самоактуализация во взрослом возрасте не сильно связана с ранней родительской депривацией. Результаты данного исследования подтверждают, что у лиц с родительской депривацией может идти успешный процесс самоактуализации, зачастую не уступающий лицам без депривации. Хотя родительская депривация несет в себе риск для успешной самоактуализации, ее влияние на процесс самоактуализации предсказуемо и контролируемо.
- Путем ретроспективного анализа рассмотрен феномен «родительской депривации» как фактора, влияющего на процесс самоактуализации, а также выявлены предпосылки процесса самоактуализации, обеспечивающие равные возможности самоактуализации как для лиц, не имеющих родительской депривации и для тех, кто имеет родительскую депривацию. Этими предпосылками являются жизненные цели, смысл жизни и отношение к себе.

Теоретическая и практическая значимость исследования. Данная исследовательская работа даст возможность дополнить достоверные данные исследований родительской депривации и самоактуализации личности, способствовать решению двойственных и противоречивых теоретико-методологических проблем, часто возникающих вокруг них. А также в работе намечены формы дальнейшей работы с лицами, пережившими в детстве родительскую депривацию. Данные исследований могут быть включены в психологические технологии личностного роста.

Экспертиза исследования. Результаты исследований регулярно докладывались на совместных заседаниях кафедры общей психологии факультета философии и психологии ЕГУ и профессиональных кафедр различных университетов РА, на республиканских конференциях.

Структура работы. Диссертация состоит из введения, двух глав, выводов, списка литературы и приложений. Общий объем работы составляет 120 страницы.

По теме диссертации опубликовано 7 статей.

TARJUMANYAN SILVI VAHE

PSYCHOLOGICAL PREREQUISITES OF THE PROCESS OF SELF-ACTUALIZATION IN CONDITIONS OF PARENTAL DEPRIVATION

Dissertation thesis for the scientific degree of PhD in psychological sciences in speciality 19.00.01 - General psychology, theory and history of psychology, psychology of personality.

The defence of the dissertation will be held on May 23, 2023, at 15^{00} at the session of the Specialized Council 067 in Psychology of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia at Yerevan State University. Address: 0025, Yerevan, st. Abovyan 52 a.

SUMMARY

The relevance of the topic: There are few observations in psychological theory and research of the impact of parental deprivation on adult life. This does not mean that the need for its study was underestimated. it was simply that parental deprivation in adulthood created testability difficulties.

In the modern world, issues of development and application of human potential are acquiring new significance. The problem of personality self-actualization is of particular importance in the field of modern socio-psychological research. Modern approaches focus on personal growth and effective behavior. This fact makes research on self-actualization popular and relevant. Therefore, the problem of personal self-actualization must be looked at somewhat differently than is classically accepted.

The object of the study is the psychological prerequisites for self-actualization among people with parental deprivation.

The subject of the study is the interdependence of the process of self-actualization and psychological preconditions among people with parental deprivation.

The aim of the study is to identify patterns of relationship between the process of self-actualization and parental deprivation among young people.

The hypothesis of the research. It is assumed that life goals, meaning of life and self-attitude, which determine the process of self-actualization of the individual, contribute to equalizing the opportunities for self-actualization among people with and without parental deprivation.

Research objectives.

1. Conduct a psychological theoretical analysis of the manifestations of parental deprivation and the characteristics of the self-actualization process.
2. Identify the mutual connections between the process of self-actualization and parental deprivation.

3. Identify differences in the manifestation of psychological components of self-actualization among individuals (youth) with parental deprivation and without parental deprivation.

4. Find out the psychological prerequisites for the self-actualization of deprived individuals (youth) in the context of the meaning of their lives, purposefulness (meaning-life orientations) and self-attitude.

5. Identify the psychological components that support the process of self-actualization.

The scientific novelty of the research.

• This study found a pattern in which self-actualization in adulthood was not strongly associated with early parental deprivation. The results of this study confirm that people with parental deprivation can undergo a successful process of self-actualization, often not inferior to people without deprivation. Although parental deprivation poses a risk to successful self-actualization, its impact on the self-actualization process is predictable and controllable.

• Through a retrospective analysis, the phenomenon of "parental deprivation" is considered as a factor influencing the process of self-actualization, and the prerequisites for the process of self-actualization are identified, providing equal opportunities for self-actualization both for people who do not have parental deprivation and for those who have parental deprivation. These prerequisites are life goals, the meaning of life and self-attitude.

Theoretical and practical significance of the research. This research work will provide an opportunity to supplement reliable data from studies of parental deprivation and personal self-actualization, and to contribute to the solution of dual and contradictory theoretical and methodological problems that often arise around them. Forms of further work with people who experienced parental deprivation in childhood are outlined. Through psychological work based on life goals, life controllability and locus of control, a successful process of self-actualization can be promoted. Research data can also be included in psychological technologies for personal growth.

The expertice of the research. The results of the research were regularly reported at joint meetings of general psychology of the Faculty of Philosophy and Psychology of Yerevan State University and professional departments of various universities of the Republic of Armenia, at republican conferences.

The sturcture of the thesis. The thesis consists of an introduction, two chapters, conclusions, bibliography and appendices. The total volume of work is 120 pages.

7 articles have been published on the topic of the thesis.